ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

info@civilcontract.am
www.civilcontract.am
Երևան, Սայաթ Նովա
40-81

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆԻՆ

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության
լիազոր ներկայացուցիչ Արուսյակ Մանավազյանից

ԻՐԱԶԵԿՈՒՄ

«15» ապրիլի, 2026թ.

Հարգելի պարոն Ավինյան,
Ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» օրենքի կարգավորումներով, ինչպես նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասով՝ տեղեկացնում եմ, որ 2026 թվականի հունիսի 4-ին, 5-ին և 8-ին ժամը 17:00-ին Հանրապետության հրապարակում անցկացվելու է հանրային միջոցառում՝ հավաք՝ ՀՀ ԱԺ հերթական ընտրությունների վերաբերյալ:
Ստորև ներկայացնում ենք օրենքով պահանջվող անհրաժեշտ տեղեկատվությունը.

1. **Հանրային միջոցառման վայրը՝** ք. Երևան, Հանրապետության հրապարակ

2. **Հանրային միջոցառման սկիզբը և ավարտը՝** 2026 թվականի հունիսի 4-ին, 5-ին և 8-ին ժամը 17:00-ից մինչև 23:00 ներառյալ:
- Միջոցառման պատշաճ կազմակերպման նպատակով միջոցառման անցկացման վայրում նախատեսվում է իրականացնել **սարքավորումների տեղադրման աշխատանքներ՝** հունիսի 2-ից մինչև հունիսի 4-ը, ինչպես նաև **ապամոնտաժման աշխատանքներ՝** հունիսի 9-ին:

3. **Մասնակիցների սպասվող թիվը՝** 30000 և ավելի
4. **Կարգադրիչների նախատեսվող թիվը՝ 10:**

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

info@civilcontract.am
www.civilcontract.am
Երևան,Սայաթ Նովա
40-81

5. **Հանրային միջոցառման անցկացման համար օգտագործվելիք առարկաները կամ տեխնիկական միջոցները-** Տեղադրվելու են բեմահարթակ, LED էկրաններ՝ ընդհանուր շուրջ 96 քմ մակերեսով, բարձրախոսներ, դրոշներ, պաստառներ:
Բեմահարթակի հիմնական տեխնիկական բնութագրերն են՝
- ընդհանուր լայնություն՝ 32.36 մ,
- երկարություն՝ 15 մ,
- բարձրություն՝ մոտ 12 մ,
- կառուցվածք՝ մետաղական մոդուլային տրուսսային համակարգ:

Բեմահարթակը ներառում է կենտրոնական բեմային հատված՝ համալրված լուսային, ձայնային և վիդեո տեխնիկական սարքավորումներով:
Նախատեսվում է նաև կուլիսային վրանների տեղադրում:

Իրազեկմանը կից ներկայացվում է կուսակցության կողմից ինձ տրված լիազորագիրը և նույնականացման քարտիս պատճենը:

Հարգանքով՝
«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն
Լիազորված անձ՝ Արուսյակ Մանավազյան